600.0430.21.11.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2018 թվականի №430Ա
քաղ. Երևան

«ՎԵՌԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացրած՝ «Վեռլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացի վերաբերյալ 2018 թվականի 2-րդ եռամսյակի տեղեկատվության մոնիթորինգի արդյունքները.

բ) 2018 թվականի նոյեմբերի 7-ից Հանձնաժողովի կողմից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը՝ Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝Կանոններ) 16-րդ, 19-րդ և 19.1-րդ կետերով սահմանված ժամկետների խախտման փաստերի ուսումնասիրության նպատակով.

գ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերության կողմից 2018 թվականի նոյեմբերի 12-ի № 30227 գրությամբ ներկայացված պարզաբանումները, համաձայն որոնց 2018 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում Կանոնների 16-րդ, 19-րդ և 19.1-րդ կետերով սահմանված ժամկետների խախտման հիմնական պատճառ են հանդիսացել ապօրինի ջրամիացումների առկայությունը, լրացուցիչ ուսումնասիրություն և կրկնակի տեղազննում կատարելու անհրաժեշտությունը.

դ) Կանոնների 16-րդ կետը, համաձայն որի՝ դիմումն ստանալու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարը դիմող անձին է ներկայացնում

տեխնիկական պայմաններ՝ դիմող անձի կողմից նոր համակարգի կառուցման դեպքում, կամ միակողմանի կնքված միացման պայմանագիր՝ Ընկերության կողմից նոր համակարգի կառուցման դեպքում.

ե) Կանոնների 19-րդ և 19.1-րդ կետերը, համաձայն որոնց՝ միացման պայմանագիրը կնքելու օրվանից մինչև Ընկերության կողմից դիմող անձին ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամանակահատվածը չի կարող գերազանցել 60 աշխատանքային օրը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նոր համակարգի ջրամատակարարման կամ ջրահեռացման համակարգերից մեկի երկարությունը առանձին վերցված գերազանցում է 500 մետրը, և (կամ) անհրաժեշտ է կառուցել պոմպակայան, միացման պայմանագիրը կնքելու օրվանից մինչև Ընկերության կողմից դիմող անձին ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամանակահատվածը չի կարող գերազանցել 120 աշխատանքային օրը.

զ) որ հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը 2018 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում 24 դեպքում խախտել է Կանոնների 16-րդ, 19-րդ կամ 19.1-րդ կետերը՝ դիմող անձանց միացման պայմանագիր կամ տեխնիկական պայման, ինչպես նաև ծառայությունների մատուցման պայմանագիր ներկայացնելով Կանոններով սահմանված ժամկետի խախտմամբ.

է) որ Հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 4-ի №109Ա և օգոստոսի 22-ի №333Ա որոշումներով Ընկերությունն արդեն իսկ Կաննոների 16-րդ, 19-րդ, 19.1-րդ կետերի խախտման համար երկու անգամ, որոնցից մեկը՝ առավելագույն չափով, ենթարկվել է տուժանքի, թույլ է տվել միացման գործընթացին վերաբերող մեծաքանակ և տարաբնույթ խախտումներ, որոնց դեպքում համաչափ է Ընկերության նկատմամբ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված տուգանքի առավելագույն չափի կիրառումը,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 3-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 16-րդ, 19-րդ և 19.1-րդ կետերը խախտելու համար Ընկերությանը տուգանել՝ 10 000 000 (տասը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝
   1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված գումարը №900005001343 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
21 նոյեմբերի 2018թ.